ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր. Գիտություններ երկրի մասին, 2001. LIV, №2, 55-56

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ. ՅՈՒ. ԼԵՎԻՆՍՈՆ-ԼԵՍԻՆԳ

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀ (АрмФАН)

Ակադեմիկոս Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը (1861-1939թթ.) պատկանում է ռուսական գիտնականբնախույզների փայլուն համաստեղությանը: Նրա անունը անբաժանելիորեն կապված է համաշխարհային պետրոգրաֆիայի զարգացման հետ, իսկ հիմնական աշխատությունները հաստատուն կերպով դրված են ժամանակակից պետրոլոգիական գիտության հիմքում:

Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը ծնվել է 1861թ. մարտի 9-ին, Պետերբուրգում: 1883թ. ավարտել է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը: 1888թ. պաշտպանել է ատենախոսություն «Օլոնեցկի դիաբազային ֆորմացիան» թեմայով և ստացել միներալոգիայի և գեոգնոզիայի մագիստրի աստիճան: 1892թ. Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը զբաղեցրեց Դորպատի (Տարտու) համալսարանի միներալոգիայի էքստրաօրդինար պրոֆեսորի պաշտոնը: Այս ժամանակից սկսվում է պետրոգրաֆիայում նոր ուղղությունների զարգացումը: 1898թ. նա հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Տեսական պետրոգրաֆիական հետազոտություն կապված Կենտրոնական Կովկասի հրաբխային ապարների ուսումնասիրությունների հետ» թեմայով և նշանակվում Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ: 1902թ-ից վարում է Պետերբուրգի համալսարանի պետրոգրաֆիայի ամբիոնը:

1925թ. Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը ընտրվում է ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, գրեթե միաժամանակ դառնալով Ֆրանսիայի գիտությունների Ակադեմիայի լաուրեատ, Լոնդոնի, Ամերիկայի և Բելգիայի երկրաբանական ընկերությունների պատվավոր անդամ: 1925թ-ից մինչև 1938թ. Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը եղել է Պետրոս Մեծի անվան երկրաբանական թանգարանի տնօրեն, իր կողմից կազմակերպված Պետրոգրաֆիական Ինստիտուտի, ինչպես նաև Կամչատկայի հրաբխագիտական կայանի տնօրեն: Բացի այդ, երեսնական թվականներին նա եղել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական և Ադրբեջանական մասնաճյուղերի նախագահը, որոնց հենքի վրա հետագայում կազմավորվեցին և հիմնադրվեցին Հայաստանի և Ադրբեջանի Գիտությունների ակադեմիաները: Միաժամանակ Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը Հայկական, Հարավ-Օսեթական, Սվանեթիայի և Կամչատկայի համալիր արշավախմբերի ղեկավարն էր և անձամբ մասնակցում էր տարբեր դաշտային հետազոտական աշխատանքներին:

Անդրադառնալով Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգի գիտական ժառանգությանը, հարկ է նշել նրա հետազոտությունների բազմակողմանիությունը: Նրա աշխատությունները նվիրված են պետրոգրաֆիայի, պետրոլոգիայի, միներալոգիայի, բյուրեղագիտության, դինամիկ և պատմական երկրաբանության, հնէաբանության, մետաղային հանքավայրերի մասին ուսմունքի, հրաբխագիտության, հողագիտության, գիտության պատմության և այլ հարցերին:

Ռեգիոնալ պետրոլոգիայի, հրաբխագիտության և մագմատիկ ապարների ֆորմացիոն անալիզի բնագավառներում իր գիտական հետազոտություններով Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը սերտորեն կապված էր Կովկասի և Անդրկովկասի հետ: Կովկասում նա սկսել է աշխատել 1890-91թթ., իսկ 1894-95թթ. մասնակցել է հետազոտական աշխատանքներին, կապված Կովկասի Գլխավոր լեռնաշղթայով լեռնանցքային երկաթուղու և թունելի նախագծման աշխատանքներին: VII Միջազգային երկրաբանական Կոնգրեսի ժամանակ (1897թ.) Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը կազմակերպեց արշավախումբ դեպի Արարատ և Արագած հրաբուխները: Նա դիտում էր նրանց որպես այս բացառիկ հետաքրքիր տարածքի երիտասարդ հրաբխականության ուսումնասիրությունների սկիզբ: Սակայն, Ռուսաստանի մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին և ապա քաղաքացիական պատերազմը խանգարեցին այս գիտական մտահղացումների իրականացմանը:

1927թ. Լևինսոն-Լեսինգը գլխավորել է ԽՍՀՄ ԳԱ մեծ համալիր արշավախումբը, որն զբաղվելու էր Անդրկովկասի և, մասնավորապես, Հայկական լեռնաշխարհի երիտասարդ հրաբխականության ուսումնասիրմամբ: Այս աշխատանքները տարվեցին 1927-ից 1930թթ. և ընդգրկեցին Հայաստանի կենտրոնական մասը (Սևանա լճի ավազան, Գեղամի լեռնաշղթա և Արագած սարի զանգված): Հանձնաժողովի աշխատանքների արդյունքների հիման վրա ավելի ուշ հրատարակվեց Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգի աշակերտների և աշխատակիցների մենագրությունների մի ամբողջ շարք: Դրանցից էին պրոֆեսոր Ա.Ս.Գինսբերգի «Հայաստանի Հանրապետության պետրոգրաֆիան», պրոֆեսոր Պ.Ի.Լեբեդևի «Արագած հրաբուխը» և այլն:

Ի պատիվ Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգի ԽՍՀՄ ԳԱ հիմնել է նրա անունով պարգևավճար, նրա անունով է կոչվել «լեսինգիտ» միներալը, ինչպես նաև մի շարք հրաբուխներ Կամչատկայում և Կուրիլյան կղզիներում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս

Ռ.Տ.ՋՐԲԱՇՅԱՆ